

հելուց յետոյ աշխատում էին այլ որս ձեռք բերել, մանաւանդ որ ազգը կամենում էր քարկոծել իւր ազգութեան նախարարները, խրախուսուելով Աստուծոյ եկեղեցւոյ պաշտօնեայններից եւ քահանայներից, որոնք յիշեցնելով ազգութիւն, կրօնի սրբութիւն, պատրաստեցին անպարտելի նահատակներ : Հայ — նախարարները այս ամենը տեսնելով եւ զգալով խրախուսուած հոգեւորական դասից (որոց պարագլուխ Յովսէփ եւ Ղեւոնդն էին) մի քանի յաղթանակներ տարան Մամիկոնեան Վարդանի զօրավարութեան ներքոյ, սակայն ճշմարիտ քաջութիւնը է նպատակին հասնելու համար կամ մեռուցանել եւ կամ մեռնել, ուստի միամայն հաւանութեամբ որոշեցին վճռական պատերազմ տալ, կամ Հայ մեռնել եւ հայրութիւնը անարատ պահել, եւ կամ պարսիկներին չձողուլ նպատակին հասանել : Այս իսկ որոշմամբ թէպէտ եւ մեռան նորա պատերազմի դաշտի մէջ, սակայն այսպիսի մի վերնագիր թողին այն տեղ. «Մենք ի սէր ազգութեան եւ մեր կրօնի եւ աշակերտութեան եւ նախնական հայրենեաց համար քաջութեամբ մեռանք, որով կամ ինչ ազգութեան եւ Ս. Կրօնի հարստութեան որդի լինել, քննեցեալ մեր օրինակին» :

Այս վերնագիրը շատ անգամ հեղեղներ կամեցան ջնջել, սակայն քանի վերկացան՝ նոյնչափ հետքեր թողելով Հայաստանի այլ եւ այլ սահմաններում, ոչնչացան :

Այսպիսի վերնագրի մի տեսարան է Հայաստան իւր քարուքանդ եւ աւերակ դիրքով. որք հետեւանք են նախնեաց ազնիւ զգացմանց. որոնք անձն ի մահ եւ մահ յանձն աշխատել են հայրենիքի հարազատ որդի լինել :

Եւ Վարդանանց տօնի օրը այն օրն է՝ որը սուրբ Հարանց զեղեցիկ նպատակին համեմատ եկեղեցին տօնելով Վարդանայ անկման յիշատակը, բաց է անում մեր առաջ երկու դուռն, արիւնոտ ճանապարհով ազնիւ մահ յանձն առնուլ եւ աշխարհի մէջ առարկի անուամբ պարծիլ, եւ ընդարձակ պողոտայ դէպ ի պարսկական հնարագիտութեան կորուստ :

Բայց եթէ կամենում ենք բարի մարդ լինել, պիտի ծառայենք մի նպատակի, այն է ազգութիւն պահելու համար ամենայն միջոց գործ դնել, եւ առ է մարդկութեան բուն սահմանը, եւ ազնիւ վախճանը :

ԵՆՈՎՔ ՍԱՐԿԱՒԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ.

ՀԵՐԻՔ Է .

Հերիք է հերիք խաւարում մնանք,
Փախչենք խաւարից՝ դէպի լոյս զնանք.
Հերիք է այսպէս, սրտով լանք ողբանք,
Հայաստան Մօր ծոց մենք մանել ջանանք :

Ահա ճանապարհ, ազնիւ ճանապարհ,
Որ պատրաստել է Աստուած բարերար,
Որի մէջ չկայ փշիւր դիմաճար,
Ուրեմն շուտաբայլ լինինք հաւասար :

Թողնենք ծուլութիւն, դէպի սէր դիմենք,
Մեր անձ վիհ ուսման նոր զոհ պատրաստենք,
Կրօնին և լեզուին միաբան ուխտենք,
Անարատ մնալ, օրէցօր պատուենք :

ՕՐԻՈՐԳ ԵՂԻՍԱՐԵԹ ՏԷՐ ՊՅՂՈՍԵԱՆՅ

է ՆՈՐԻ ԿՆԱՆՆԱՆ

յԵՐԷԱՆ .

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ԿՏԱԿ Պ. ԲԷՐՈՒՉԵԱՆՅԻ

Վուլթայիսեցի հանգուցեալ Պօղոս Բէրուզեանց՝ տեղւոյն Հայոց Ս. Գէորգ Ակեղեցւոյ սրահում հիմնեալ հոգեօր Գպրոցի յանուն՝ ի կենդանութեանն կտակած է երկայարկ քարուկիր մի կըրպակ, որպէս զի նորա արդեամբք Հ. զըպրոցին նիւթական միջոցին նպաստ և օգուտ լինի, և ըստ արժանւոյն ուշադրութիւն մատակարարուի ուսումնական վիճակին, և Հայկազուն մանկուկնք յաջողին քաջ ուսանել մեր լեզուն և կրօնը

Հանդերձ այլովք կենցաղօգուտ գիտե-
լիօք:

Ստակաւատար եղած է բարեպաշտու-
հի կողակից Հանգուցելոյն Աղիսարէթ Պ.
Բերուզեանց, որ Ա.Ե.Հ. Հայրապետէն
յատկապէս օրհնութեան Անդակ ընկա-
լաւ:

Հանգուցեալ Բերուզեանցի այսպիսի
առաքինութիւն՝ իւր սրտին և զգացմանց
վսեմ արտայայտութիւն լինելով Հան-
դերձ՝ Փրկչին մերոյ Հիսուսի Վրիստոսի
սիրելի և հաճելի բարեգործութեանց մին
կհանդիսանայ՝ նոր Աիօնի մանկանց միա-
քերը լուսաւորելոյ և ոգիքը վառելոյ հա-
մար:

Ընդունշտ եմք՝ զե բարեպաշտուհի Տ.
Աղիսարէթ Բերուզեանց նախանձախնդիր
կհեատի իւր արժանայիշատակ կողակցոյն
հոգեկեցոյց և զովելի կտակը և նպատակը
արդիւնաւորել և պսակիլ տալոյ:

Այս առթիւ նաև շնորհակալութիւն
կյայտնեմք Վութայիսու բարեկր. Պա-
ւիթ Աւագ Վահանայ Արարելանցի բա-
րեպատակ եւանդեան և ջանից համար:

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿԱՐԱՊԵՏ ԹՒԼՔԻՅԵԱՆՑ
ԵՒ ԻՒՐ ԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՏԱԿ.

Բնիկ Գրիգորապօլցի և ի Վիշնե վե-
րաքնակեալ և տնաւորեալ Պ. Արապետ
Ընդրէասեան թիւքիյեանց՝ նշմարելով որ
այլ ևս չպիտի կարողանայ երկարժամա-
նակեայ կրած հիւանդութեան տաղեա-
պէն զերծանիլ՝ անցեալ տարի (ի 1873
ամի) Ապրիլ ամսոյ մէջ՝ կիրախուսուի
և կպատրաստուի իւր հոգեւոր պիտոյք-

ները հոգալ՝ միանդամայն իւր նիւթա-
կան կարողութիւնքը բարենպատակ տնօ-
րէնութեանց շրջիլ և յատկացնել:

Ուստի ի ներկայութեան անդական,
Վաղ. Նօտարի և վիայից՝ օրինաւոր ար-
ձանագրութեամբ՝ ի 14 ն Ապրիլ 1873 ի՝
յայտնելով իւր իզձերը և կտակը՝ վաւե-
րացնել կտայ, որոյ պատճէնը ստորև կը
փութամք հրատարակել:

Նա և իւր այս կտակը կիութայ հի-
տեւալ զրութեամբ յայտնել Ա.Ե.Հ.
Հայրապետին՝ և Նորին Արքութեան օրհ-
նութիւնը հայցել. որում Ա.Ե.Հ. Հայ-
րապետ ևս ուղղեց օրհնութեան և շնոր-
հակալութեան Անդակ:

Ընցեալ Յունիս ամսոյ վերջին աւուրց
մէջ յիշեալ Սեծ. Արապետ թիւքի-
յեանց կիքից այս աղցաւոր կենաց շրջա-
նը:

Ինչպէս արձանագրութենէն կտեսնուի,
այս կաակ կործագրուի բարեյիշատակ
թիւքիյեանցի հաւատարիմ և բարե-
պաշտուհի կողակից Աղիսարէթ Հայ-
րապետեանցի վախճանելէն զինի:

Այլուածքներն կարժեն մօտ 30000
ռբլ. և տարեկան 1500 ռուբլիէն աւելի
եկամուտ կարող են տալ:

Արդ այսպէս գիտցաւ լուսահոգի Ա.
թիւքիյեանց անցաւոր կենցաղոյս մէջ
անանցանիլ բարի յիշատակ և գեղեցիկ
առաքինասիրութեանց կոթող կանգնել,
որով նա և յաւիտեանս բարոյական զա-
ւակներ պիտի ընդունի ինքեան, և նոքօք
պիտի փառաւորուին իւր անուն և բարե-
գործութիւնք:

Ահաւասիկ զրութեան և արձանա-
գրութեան օրինակները:

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ.

Ի մանկութենէս սնանկըով և զարգանալով բարեպաշտ ծնողաց և շայաստանայց Արևիկացւոյ ամենահոգոր հովանաւորութեանցը ներքոյ, իմ կենացս մէջ ոչ երբէք իմ անձնական օգուտը Ազգի և Արևիկացւոյ օգուտներէն վեր դասած եմ, այլ ընդհակառակն որքան կարողութիւնս ինձ կնիւրէր, չեմ խնայած ամենևին եթէ ոչ իմ աստաձեռն օգնութիւններս, զէթ իղձ և փափազ ունեցած եմ սրտիս մէջ աշխատել և տքնել անդադար, իմ սեփական ջանիւքը և արեանաքիրան աշխատանքը վաստիած յիշատակ մը թողցնել ինձմէ ետքը, և այնու իմ սեպուհ որդիական պարտաւորութիւնս կատարել զէպ ի Արևիկացին և Ազգն մեր:

Փառք և հաղար փառք Աստուածային նախախնամութեան, որ լսեց իմ աղօթքներս և ջերմ պաղատանքներս և պարզեց ինձ այնքան կարողութիւն, որ արդ կկարողանամ իմ վաղեմի փափազս կատարել և մխիթարիլ հոգեպէս, և ապաստել “Արդ արձակեա Տէր զճառայս քո ի խաղաղութիւն, . . . վասն զի շատ տարիներ են թարկուելով զանազան նեղութեանց, անձնական տկարութեանց և հիւանդութեանց, սկսայ զգալ որ մերձեցաւ ինձ այն ժամանակը, յորում ամենայն մարդ պարտաւոր է իւր Ատեղծօղին անդառնալի վճռոյն հնազանդիլ եթէ “Շող էիր և ի հող դարձցիս, . . . վասն որոյ և մտածեցի որ իմ վերջին քրիստոնէական պարտքս և փափազս կատարեմ և աղքատիկ լուծայն ևս ձգեմ ի գանձանակ ազգային լուսաւորութեան և յառաջադիմութեան, Աւ ահա այս նպատակաւ

խորհրդակցելով իմ պատուական կողակցոյս Աղիսաբէթ շաճի շայրապետեանի հետ, որ զիտցաւ սրբութեամբ կատարել իւր պարտաւորութիւնքը և ինձ հետ միասին փառք տալով Աստուծոյ կնթարկուիլ զանազան նեղութեանց և ցաւոյ՝ և հուսկ յետոյ խնամել զիս սիրով այս երկարաաւ հիւանդութեանս ատեն, և մանաւանդ յորդորուելով տեղւոյս շողեոր Առաւվարութեան Վարաուդար Ատեփաննոս Պարխուդարեանին հոգեշահ խօսքերէն և խրախուսութիւններէն (որ իմ մերձաւոր բարեկամներէս մէկն է,) ամենաջերմեանդն սիրով և ի բոլոր սրտէ պատշաճ դատեցի յօրինել կտակ և իմ բոլոր անշարժ կալուածքս, որք կդոնուին Վիշնէի մէջ և ունին արժօգութիւն մինչև 30000 ռուբ. արծ. և որք ի տարին կբերին արդիւնք մինչև 1500 ռուբ. կտակիլ իմ և կնոջս մահուանէն յետքը, Ա. Աջմիածնայ շողեոր Աշխանութեանդ, զոր և կատարեցի այս ամսոյ 24ին օրինաւոր կտակաւ:

Այս ամենը յայտնելով ի զիտութիւն Աստուածարեալ շօրդ հասարակաց, որ սրտացաւ աշխատանք անդուլ կտքնիք ի բարօրութիւն շայկական Ազգիս, պատշաճ կդատեմ ուղարկել ի տես Չերոյին Ա. հափառութեան իմ կտակիս պատշաճէնը, որոյ իսկականը հանդերձ միւս այլ ամենայն կարեւոր թղթերով՝ որք իմ կալուածոցս կվերաբերին՝ յանձնեցի Վերապատիւ Փիլիսնորդին թէմիս յապահով պահպանութիւնն և ստացայ ձեռագիր. արտասուօք կինդրեմ ամենախորին որդիական հպատակութեամբ, հաճեցէք, Ա. հափառ Տէր, մխիթարել զևս

և թեթևացուցանել իմ ցաւերս Չեր
 Հայրապետական Սուրբ Օրհնութեամբը,
 որում շատ և շատ կկարօտիմ ինչպէս ես՝
 նոյնպէս և բարեպաշտ կողակիցս, և չմո-
 ոանալ զիս Չեր Եստուածահաճոյ աղօ-
 թիցը մեջ, որ կարողանամ հանդարտ
 հոգևով անցուցանել սակաւօրեայ կիսնքս
 և պարզերես յանձնել իմ հոգիս ի ձեռս
 Եստուծոյ :

Մատուցանելով ջերմեռանդն համբոյր
 որդիական Եմենամաքուր Սուրբ Աջոյն
 Չերոյ՝ եմ և մնամ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵՆԵԼ ԼՕՐԳ ԼԱՍԱՐԵԿԵՑ

Ամենախոնարհ ծառայ և որդի

ԿԱՐԱՊԵՏ ԹԻԼՔԻՅԵԱՆՅ.

ի 27 Ապրիլի 1875.

Քիչն

Պարաք կհամարիմք շնորհակալութիւն
 յայանել նաև Պարոն Ստեփաննոս Պար-
 խուտարեանց բարեսէր և եռանդուն երի-
 տասարդին :

« Ի հազար ութն հարիւր եօթանասուն և ե-
 րեք ամի ի 24 ն Ապրիլի հրաւիրեալ եղե ես՝ Ա-
 նատօի Եգորով Կուսակով Նօտարիւս Քիչնեայ,
 որ ունիմ զգրասենեակ իմ ի չորրորդում մասին
 ի փողոցին Խարամբեմուկոյ ի տան ընդ համարաւ
 հարիւր եօթանասուն չորս՝ առ անձն անձանօթ
 ինձ անձամբ՝ Գրիգորիապօլ քաղաքացի Կարա-
 պետ Անդրէասով Տիլլի բնակողի յառաջին
 մասնի քաղաքիս Քիչնեայ ի Հիւրընկալական փո-
 ղոցի ի սեպհական տան ի տեղոջ բնակութեան,
 ուրանօր ի ներկայութեան ծանօթ ինձ վկայից,
 հաւաստողաց վնոյնութիւն և զօրինական իրաւա-
 սութիւն հաստատելոյ զարձանադրութիւնս Տիլլի՝
 Քիչնեայ վաճառական Յակօր Խաչատրեան Եա-
 կուբովի, բնակողի չորրորդում մասին քաղաքին
 Քիչնեայ ի փողոցին Կոստանդինովսկի ի սեպհա-
 կան տան, Կօլեթսկի Սեկրետար Լէօնիտա Իվա-

նովի Ստադուսիոյ բնակչի ի չորրորդում մա-
 սին քաղաքին Քիչնեայ ի փողոցին Աօղնեոսինսկի
 ի տան Կիլլիրայ ի փողոցին Օգարօյի ի տան
 Գրօմօվանի և պաշտօնաթող Մայիօր Նիկօլայ
 Եֆիմովի Կօրնիևսկոյ, բնակողի ի չորրորդում մա-
 սին քաղաքին Քիչնեայ ի փողոցին Աօղնեոսինսկի ի
 տան Կիլլիրայ, նա Տիլլայ՝ (Թիլլքիյանց) յայտ-
 նեաց, թէ ցանկայ հաստատել զկտակ ի վերայ
 հետեւեալ պայմանաց, Գրիգորիօպօլու քաղա-
 քացի Կարապետ Անդրէասեան Տիլլի գտանկով
 յառողջ գատողութեան և ի հաստատուն յիշո-
 դութեան ծանուցեալ է բարւոք բացատրել զվեր-
 ջին կամս իւր մասնատրիւոյ զյետամնայ կայս
 իւր որպէս զանշարժս՝ նոյնպէս և զշարժականս,
 որք են նախ՝ տուն մի քարաշէն՝ միայարկ հանդերձ
 նկուղիք և զանագան շինուածօպք առ նովն,
 ջրհորօք, այգով ի սրահին և անատեղեաւ երկա-
 րութեամբ քառասուն եօթն՝ և յայնութեամբ ե-
 րեսուն սաժէնի, շրջապատեալ քարեայ պատուա-
 րաւ, որ գտանի յառաջնումն մասին քաղաքին
 Քիչնեայ ի փողոցին Աօտոննի, Մաղիլեակի և
 Կասեմանսկի կառուցեալ ի նմանէ Տիլլ. ի վերայ
 գեանոյ, տուելոյ նմա ի Շինուածական Թողովոյն
 Քիչնեայ, և երկրորդ՝ շարժական գոյս, որք են՝
 առ ձեռն պատրաստի դրամք, զանագան թանկա-
 զին իրք, ոսկեայ, արծաթեայ, զարդարեալ ադա-
 մանդովք, մարգարօք, և ադամանդովք, առ տնին
 կահուկարասիք, անօթք, և այլք, Չամենայն զգոյս
 շարժականս, որք մնայցեն զկնի մահուան նորա,
 Կարապետի Տիլլի, նա կտակէ ի լիակատար և ի
 մշտնջնական սեպհականութիւն կնոջ իւրում
 Եղիսարէթի Հաճի Հայրապետեան Տիլլի, ի սերնդէ
 Խաչատրեան, լծակցի իւրում յաշխատութիւնս
 և ի հոգս կենաց, Յայնտիկ գոյս ոչ որ ունի ի-
 րաւունս ձեռնամխիլ յազգականաց նորա՝ Կարա-
 պետի Տիլլի՝ և այնորիկ մնան ի լիակատար և
 յանսահմանափակ սեպհականութեան կնոջ նո-
 րա. զանշարժ կայս իւր, որ է՝ վերոյիշատակեալ
 տունն, նա Կարապետ Տիլլքի կտակէ նոյնպէս
 կնոջ իւրում ցկեանս Չայտոսիկ կայս նա՝ կինն
 չունի իրաւունս վաճառել կամ գնել ի գրաւ,
 սակոյն կարէ միայն և եթ շահել յամենայն ի
 կեանս իւր առանց որոց և իցէ միջամխութեանց

Իսկ յետ մահուան նորա սոյն անշարժ կայք նորա մտաննն ի լիակատար սեպհականութիւն Հոգևոր Տեսչութեան Հայոց Էջմիածնի վան յետագայ բարեկամատակ գործոց. նախ՝ Հոգևոր Տեսչութիւնն այն պարտաւոր է յոնժամաց երկից ամաց յօրէ յանձնմանն նմա ի տիրապետութիւն կրտսեալանդեալ կայից աննել միանուագ մշտոր մի անգամ և մշտնջենայէս՝ զաւակաց հանգուցեալ անդրանիկ եղբոր Ատակարարին Գրիգորիօպօլու քաղաքացի Մկրտչի Անդրէասեան Տիկլի՝ Յարութիւնի, Աարապետի, Ալմասի, Ինջի, Մարիամու, Հոսիսիմեայ, Աննայի և Ասկիի Մկրտչեան՝ յիսուն յիսուն ուսւլ. կրտսեր եղբոր Ատակարարին Գրիգորիօպօլու քաղաքացի Յովհաննէս Անդրէասովին Տիկլի՝ տալ զհարկեր ուսւլ. որդւոյ նորա Սարգսի և դստերաց նորա՝ Մանուշակի և Վազմեալայ զյիսուն յիսուն ուսւլիս, քիս կտակարարի Քափիկի Անդրէասեան Փելտմաճի ի սերունդնէ Տիկլի, որդւոց նորա՝ Յակոբայ և Մկրտչի Փէլտմաճեանցի՝ զյիսուն յիսուն ուսւլիս, և Գրիգորիօպօլու եկեղեցւոյն Հայոց Սուրբ Խաչի զհարկեր ուսւլիս Երկրորդ՝ Հոգևոր Տեսչութիւնն Հայոց պարտաւորի հատուցանել յիւրաքանչիւրում ամի, 1. հօրն Ատակարարի Գրիգորիօպօլու բնակիչ Անդրէաս Յարութիւնեանի Տիկլի ցօր վախճանի նորա ի տարին զտասնական ուսւլիս առ իւրաքանչիւր ամիս, 2. Եկեղեցւոյն Հայոց Քիչնւայ սուրբ Աստուածածնի զհարկերական մանէկն ի տարին, այնու՝ զի Եկեղեցին կատարեցէ զտոբական մաղթանս և զհոգեհանգիստ Ատակարարին, կնոջն և հանգուցեալ աղբականաց նորա երկիցս ի տարին, Այս գումար նշանակի ի վարձ վասն Քահանայից՝ վասն հոգեհանգստեան և բաժանելոյ աղքատաց ընդ նկատողութեամբ եկեղեցական իշխանութեան, 3. ի պահպանութիւն միոյ ամի յանուն Տիկլի ի Հոգևոր Գպրոցին Էջմիածնի զ300 ոս ի տարին, և յետ այնր զամենայն զմնացեալ յեկամոցից կտակաւանդեալ կայից զրամս պարտի գործադրել ի կրթութիւն և ի սնունդ աղքատիկ մանկանց Հայոց զաւանութեան ի հոգևոր ուսումնարանին Հայոց Քիչնւայ և յայլ առաքինական գործս:

Զարժէս բոլոր կտակաւանդեալ կայից որոշէ կտակարարն ըստ խղճի՝ երեք հազար հինգ հարիւր ուսւլ:

Ծրագիր սոյն կտակաւորութեան, առաջարկեալ ի կտակարարէն, ընթերցայ նմա ի ներկայութեան վերջիշեալ վկայից, և ըստ հաւանութեան նորա և վկայութեան, զի նա ըստ յօժարականութեան իւրոյ ցանկայ հաստատել զայս կտակագիր և հասկանայ զմաստ նորա և զնշանակութիւն, արձանագրեցաւ ի մատենի, յորմէ կրկին անգամ ընթերցաւ նմա, և ասպս զրեալ ի վերայ օրինաւոր թղթոց, ստորագրեալ են ինքն և այլ վկայք:

ՅՈՒՅԱԿ ՆՈՒՒՐԱՏՈՒԵՑ

Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅԱՅ.

(Ն-բ-ն-է-ն-է-ն-է):

Ի ՎԻՃԱԿԻՆ ԱՂԷՔՍԱՆԳՐԱՊՈՒՈՑ:

	Ո.	Կ.
Հասարակութիւն Իլիկիայ գեղջ	15	
Նոյն գիւղացի Մանուկ Պետրոսեան	1	
„ Երեցփոխ Մարտիրոս Յակոբեան	1	
„ Յովհաննէս Աստրելեան	1	
„ Մահտեսի Պօղոս Գալուստեան	20	
„ Փիլոս Գրիգորեան	50	
„ Թորոս Վարդանեան	50	
„ Յակօ տէր Յովհաննէսեան	40	
„ Մարտիրոս Սարգսեան	20	
„ Պետրոս մահտեսի Ղէվօյեան	50	
„ Սարգիս Մանուկեան Անթոյեանց	50	
„ Թօրոս Մարտիրոսեան	50	
„ Մարութ Յովհաննէսեան Քրլ-ճեանց	50	
„ Գրիգոր Սուլթանեան	20	
„ Գէորգ Սուլթանեան	„	
„ Թովմաս Ալփաղեան	30	
„ Յովհաննէս Յարութիւնեան	20	
„ Միքայէլ Սուլթանեան	1	
„ Համբար Յարութիւնեան 2ալօ-յեանց	40	